ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

# ՍԻՐՈ ՄԱՍԻՆ[1]

## 1. Ինչ է սերը

ՀՈԳԵՒՈՐ *փորձառության առաջին եւ ամենից խորունկ աղբյուրը հոգեւոր սերն է։ Այն պետք է ընդունել որպես հոգեւոր փորձառության հիմնական եւ անհրաժեշտ «գործարան (օրգան)»։ Եւ յուրաքանչյուր քրիստոնյայի համար սա պետք է որ հստակ լիներ՝ առանց ապացույցների։*

Սերը *տրամաբանորեն սահմանելու բոլոր փորձերը ապարդյուն կլինեին. այս տեսանկյունից հնարավոր չէ ո՛չ լուսավորել եւ ո՛չ համոզել նրան, ով այն չի ապրել։ Թեեւ, այս հարցում հոգեւոր փորձառությունը նման է կամայական այլ փորձառության։* Ցանկացած ապացույց, *ի վերջո եւ որպես վերջին աստիճան, հիմնված է կենդանի փորձառության, կենդանի ընկալման ու հայեցողության վրա։ Ցանկացած ապացույց վաղ թե ուշ (որքան շուտ, այնքան լավ) հասցնում է այն* առարկային, *որը պետք է ընկալել, տեսնել եւ ապրել։ Նրան, ով չի կարողանում ընկալել, կամ չի ցանկանում ապրել ու տեսնել այդ առարկան, ընդհանրապես հնարավոր չէ ոչինչ ապացուցել ո՛չ բնական գիտությունների, ո՛չ պատմության, ո՛չ էլ փիլիսոփայության շրջանակներում։ Ապացույցի վերջին աստիճանը միշտ հնչում է այսպես. «եւ այս ամենն այսպես է, քանի որ հենց առարկան է այդպիսին. ահա այն՝ վերապրի՛ր, ընկալի՛ր, փորձի՛ր եւ ընդունի՛ր» եւ հետո. «եթե չես ուզում կամ չես կարող, ապա հեռո՛ւ գնա, լո՛ւռ մնա եւ մի՛ խանգարիր ուրիշներին»... Հենց այդպես. նա, ով ունակ չէ առարկայական փորձառության, պետք է հեռանա փորձասենյակից եւ դադարեցնի բոլոր բանավեճերը, եւ այն էլ որպես մտավոր կամ հոգեւոր անկարողության հետեւանք։ Փիլիսոփայության մեջ խնդիրը ճիշտ նույնն է, ինչ բարձրագույն մաթեմատիկայում կամ ֆիզիկայում, կամ իրավագիտության մեջ...*

---

[1] *Սույն թարգմանությունը հեղինակի «Հոգեւոր վերանորոգման ուղին» աշխատության Բ. գլխի թարգմանությունն է (բնագիրը տե՛ս* И. А. Ильин, Путь духовного обновления, Москва, *2011, էջ 51–66), որի Ա. եւ Ե. գլուխների հայերեն թարգմանությունը տե՛ս «էջմիածին», Ա. 2018, էջ 31–56, Դ. 2018, էջ 21–45։*

*Այնուամենայնիվ՝ հոգեւոր սիրո կենդանի յուրահատկությունը կարող է եւ պետք է* նկարագրվի։ *Սեր, ինչ վիճակ է դա եւ ինչո՞վ է տարբերվում հոգեւոր սերը ոչ հոգեւորից։*

*Այնտեղ, որտեղ սկսվում է սերը, ավարտվում է անտարբերությունը, ծուլությունը, ցրվածությունը. մարդը հավաքվում եւ* կենտրոնանում *է, նրա ուշադրությունն ու հետաքրքրությունը սեւեռվում են մեկ բովանդակության՝ հենց սիրելիի վրա։ Այստեղ նա դառնում է* գործուն, *նրա հոգին ասես սկսում է շիկանալ եւ այրվել։ Սիրո բովանդակությունը՝ լինի մարդ, թե նկարների հավաքածու, երաժշտություն, թե սիրելի լեռները, դառնում է հոգու կենդանի կենտրոնը, կյանքի ամենակարեւոր բանը, նրա գլխավոր առարկան։ Պարզվում է, որ սերը, Պլատոնի խոսքերով, մարդուն միանգամից տալիս է ե՛ւ հոգեւոր հարստություն, ե՛ւ հոգեւոր աղքատություն։ Հարստություն, քանի որ մարդը գտել է իր կյանքի գանձը, որն իրենն է եւ որը նա ասես կրում է իր ներսում։ Այստեղից էլ առաջանում են հոգեւոր լիության, ուժի, երջանկության, կյանքի հանդեպ բարձր հետաքրքրության եւ այդ ամենի համար շնորհակալության զգացումները։ Աղքատություն, քանի որ մարդու ներսում առաջանում է զգացողություն, որ իր գանձը երբեք վերջնականապես իրենը չէ եւ որ* առանց *նրա եւ նրանից* դուրս *ինքն աղքատիկ է, տխուր եւ միայնակ։ Այստեղից էլ առաջանում են հոգեւոր աղքատության, թուլության, դժբախտության, ամեն ինչից հիասթափության զգացումները եւ տրտունջը՝ զրկվածության եւ չքավորության։ Սակայն ամեն դեպքում, չնայած այդ զրկվածության թախծին, մարդն իրեն առատացած եւ հարուստ է զգում։*

*Ահա թե ինչու սերն այնպիսի* ուրախություն *է, որը չի լքում մարդուն նույնիսկ տառապանքի ժամանակ, այլ այնպես է լուսավորում նրան ամեն տեսակի անհաջողության, զրկանքների եւ տրտմությունների մեջ, որ նա ուրախանում է նաեւ տանջվելիս, քանի որ գիտի, որ իր մեջ մի գանձ ունի եւ զգում է, թե ինչպես է այդ գանձի մերձավորությունից հոգին լցվում խորը եւ խորհրդավոր ուրախությամբ՝ ասես մի ինչ-որ երանելի լույսով։ Ստացվում է, որ սերն ինքնին, նույնիսկ սիրո առարկայից կտրված լինելու դեպքում, արդեն իսկ երջանկություն է, որի մեջ հոգին դադարում է քարանալուց, փափկում է, ասես շարժուն ու թեթեւ, ճկուն ու հոսուն է դառնում։ Նա քնքշորեն զգում է, երգում ու ողջ աշխարհին վերաբերվում է կարեկցությամբ եւ բարությամբ։* Սերը բարություն *է ոչ միայն այն պատճառով, որ այն կարեկցությամբ է շրջապատում*

*սիրո առարկային, հոգ է տանում նրան, տանջվում եւ ուրախանում է նրա հետ միասին, այլեւ այն բանի համար, որ սերն ինքնին երջանկացնում է մարդուն եւ նրա ներսում պահանջ առաջացնում՝ իր շրջապատում գտնվող ամեն բան ու ամենքին երջանկացնելու եւ այդ՝ ուրիշի երջանկությունից՝ ասես սեփական երջանկության ճառագայթից, բավականություն ստանալու։*

*Իսկական սերը սրանով չի սպառվում եւ սրա վրա կանգ չի առնում. այն* թափանցում է *սիրո առարկայի մեջ ընդհուպ մինչեւ նրա հետ* գեղարվեստական նույնականացումը[2]։ *Սիրող մարդու մեջ զգացողությունն ու երեւակայությունը միավորվում են եւ զորացնում են նրա ընկալման ու վերարտադրման ուժն այնքան, որ սիրո առարկայի հանդեպ նրա խորաթափանցությունը հասնում է իսկական* ներքմբոնողական (ինտուիտիվ) *պայծառատեսության։ Երբեմն պայծառատես խորաթափանցության այդ ուժը սահմանափակվում է միայն սիրելի մարդով (օրինակ՝ մոր համար երեխաներով) կամ սիրո առարկայով (օրինակ՝ երաժշտական քննադատի համար՝ միակ սիրելի երգահանի երաժշտությամբ)։ Սակայն այդ ուժը միշտ փոխանցվում է այլ մարդկանց, եւ նույնիսկ, ողջ աշխարհին (օրինակ՝ հանճարեղ նկարչի պարագայում)։ Ամեն դեպքում, սիրո շնորհիվ երջանկացած մարդը, ի տարբերություն չոր ու քարացող սիրտ ունեցող սառն ու մանրախնդիր եսասերի, բոլորովին այլ կերպ է մտահայում եւ ընկալում արտաքին ու ներքին աշխարհների առարկաները։ Ողջ աշխարհը ուրիշ բան եւ այլ կերպ է ասում սիրող մարդուն, ասես յուրաքանչյուր ծաղիկ հատուկ կերպով է բացվում նրա համար, յուրաքանչյուր թռչուն այլ կերպ է երգում նրա համար, արեւի յուրքանչյուր ճառագայթ ավելի պայծառ է շողում նրա համար, մարդկային յուրաքանչյուր սիրտ առանձնահատուկ կերպով է դառնում դեպի նա, ճիշտ ինչպես հավի ոտքերով խրճիթն է հեքիաթում Իվան Արքայազնին դեմքով շրջվում, իսկ անտառին ետեւ է դարձնում։ Քանի որ սերը ամեն բան ջերմացնող, ամեն բան բացող եւ ամենատես ուժ է, այն ինքնին եւ՛ ծաղկում է, եւ՛ երգում, եւ՛ շողում։*

*Ահա թե ինչու դաստիարակի, բժշկի, նկարչի եւ հոգեւոր հոր սիրող հոգին իրապես սրբազան զենք է նորանոր ընկալումների եւ ունակությունների համար, եւ խստասիրտ եսասերի դիտարկումները պարզապես խղճուկ թուլություն են նրանց տեսողության եւ ազդեցության համեմատ։ Քանի որ նրանք ընկալում են այն.*

[2] *Տե՛ս առաջին գլխի երկրորդ բաժինը։*

«Ինչ մտքի համար ծածկված է խավարով,
Սակայն սրտին տեսանելի է հեռվում…»
(Իշխան Պ.Ա. Վյազեմսկի)

*Եւ սիրող սրտի այս տեսողությունն ու ազդեցությունը, որ հաճախ իսկապես հանճարեղ խորաթափանցություն է դրսեւորում, զորանում է նաեւ անձնազոհությունից՝ սիրո վերջին եւ բարձրագույն շնորհից։ Իրոք, սիրող սրտի ներզգացական ըմբռնումն ու երեւակայությունը երբեմն հասնում են այն բանին, որ մարդն իսկապես ամբողջական անձնուրացություն է դրսեւորում. սիրո առարկան սեփական անձից բարձր է երեւում, դառնում է իր կյանքի կենդանի կենտրոնը, որին նա ծառայում է առանց դույզն ինչ նվաստանալու եւ որին նա շռայլորեն եւ անձնվիրաբար շատ բաներ է զոհաբերում՝ ամենեւին չխորհելով այդ զոհերի մասին։ Նա կատարում է իր համար բնական եւ անխուսափելի միակ բանը, իրագործում է անհրաժեշտը՝ որպես իր համար հնարավոր եւ հոժարակամ ցանկալի միակ բան՝ առանց մտածելու իսկ ուրիշ, վախկոտ եւ կեղծավոր ճանապարհների մասին։*

*Այսպիսին է իսկական սերը, այսպես է այն կյանքում գործում եւ դրսեւորվում։*

*Երբեմն այս տեսքով, թեեւ շատ հազվադեպ, սերը կարելի է գտնել նաեւ առօրյա կյանքում, հենց այնտեղ, որտեղ այն բխում է մաքուր եւ կատարյալ սրտից։ Ոչ ոք նման սիրտ եւ նման սեր ունեցող մարդկանց այդքան կատարյալ չէր կարողանում նկարագրել, որքան Դոստոեւսկին, Լեսկովը եւ Շմելյովը Ռուսաստանում, Դիքենսը եւ Հոֆմանը Արեւմտյան Եւրոպայում։ Բայց իր իսկական եւ վերին ձեւն այս սերը ձեռք է բերում այն ժամանակ, երբ* սեր-տաճում է հոգեւոր փոռձառության հետ *կամ ուղղակիորեն* բխում է *դրանից։*

*Մարդուն հասանելի է երկակի սեր՝* բնազդի եւ հոգու։ *Դրանք բացարձակապես ո՛չ թշնամի են իրար, ո՛չ էլ հակառակ, սակայն համեմատաբար հազվադեպ են զուգակցվում։ Մասամբ այն պատճառով, որ շատերն ընդհանրապես հոգեւոր սեր չեն ունեցել, մասամբ, որ սիրո այս երկու տեսակը փոխադարձ տարաձայնության մեջ են մտնում, մասամբ էլ, որ դրանցից զորավորը թույլ չի տալիս մյուսին զարգանալ ու ամրանալ եւ պարզապես ենթարկեցնում է իրենից թույլին։ Բայց որքա՜ն երջանիկ են այն մարդիկ, որոնց սրտում սիրո այդ երկու հոսքերը միախառնվում եւ նույնական են դառնում։ Երկրի վրա ցանկացած այլ երջանկություն դրա հետ համեմատած ինչ-որ առումով երկրորդական է։*

*Սիրո այս երկու տեսակների տարբերությունն այն չէ, որ մեկը «զգացական» է եւ այդ պատճառով «երկրային», իսկ մյուսն ընծայված է «վերզգայականին» եւ կոչվում է «երկնային» կամ «պլատոնական»։ Դրանց տարբերությունն այն է, որ* բնազդի սերը *փնտրում է տվյալ մարդուն* անհատապես (սուբյեկտիվորեն) դուրեկանը, *որպեսզի հետո կուրորեն կատարելացնի այդ դուր եկածը եւ առանց որեւէ հիմքի իր երեւակայության մեջ ամեն տեսակ կատարելություններ վերագրի նրան։ Այստեղ ամեն բան որոշվում է անհատական (սուբյեկտիվ) դուրեկանությամբ եւ անձնական հաճույքով, այն դեպքում, երբ որակի, արժանիքի, կատարելության արմատը երկրորդ տեղ է մղվում կամ ընդհանրապես նշանակություն չի ունենում։ «Այս առարկան ինձ դուր է գալիս, նշանակում է այն պետք է ամեն տեսակի կատարելություն ունենա... դուրեկան է, նշանակում է լավն է,* դուրեկանն է լավը»... *Ինքնին ենթադրվում է, որ այս կուրացմանը, այս պարզամիտ կատարելացմանը դեպքերի մեծամասնության պարագայում վաղ թե ուշ հիասթափություն է հետեւում։*

*Ի տարբերություն սրան՝* հոգեւոր սերը *հակված է դեպի* որակը, արժանիքը, կատարելությունը։ *Այն կուրորեն չի փառաբանում իրեն դուրեկանը, այլ փնտրում է իրական լավը եւ այդ իրական լավը մարդու մեջ սիրո զգացում է առաջացնում. դրանք են՝ հոգու բարությունն ու վեհությունը, արվեստի գեղարվեստական ստեղծագործությունը, խորունկ եւ մաքուր սիրտ ունեցող մարդը, արդարությունը, իմաստությունը, բնության կշիռն ու վսեմությունը, մի խոսքով՝* աստվածային կատարելությունը *բոլոր երեւույթներում, իրերում, մարդկանց մեջ, վիճակներում եւ արարքներում... Հոգեւոր սիրով ապրող մարդու զգայուն եւ նրբազգաց սիրտն ասես բնությունից իսկ ուղղված է դեպի* իրական (օբյեկտիվ) լավը, *այնպիսին, որն* իրապես *«բարի է յոյժ» (հմմտ. Ծննդ. Ա. 31)։ Եւ սրտի այդ հակումը դեպի իրերի իրական հատկանիշները կամ արժանիքները միշտ ինչ-որ աստվածային շնորհ է, որը կարող է, սակայն, ամրացվել եւ զարգացվել ինչպես դաստիարակությամբ, այնպես էլ* ինքնադաստիարակությամբ։ *Այդպիսի մարդն ասես նայում է աշխարհին* որակական պատուհանից՝ *փնտրելով իրական կատարելություն, գտնելով այն, նախընտրելով այն, հոգեւորապես ցնծալով եւ հագենալով միայն նրանով։ Նրա սիրտը մխիթարվում է [այդ իրական կատարելությամբ], վայելում, սիրում է այն։ Այն կապում է իրեն մարդու հետ, այն ապրում է նրա հաջողություններն ու հաղթանակներն իբրեւ սեփականը, այն միշտ*

*պատրաստ է օգնելու նրան խոսքով եւ գործով, ծառայելու նրան, շատ ու շատ այլ բաներ զոհաբերելու նրան...*

*Հոգեւոր սերն ասես* հոգու խաղց լինի աստվածայինի հանդեպ, *անկախ նրանից, թե ինչ տեսքով կհայտնվի այդ աստվածայինը։ Այն ասես հոգոց, կոչ, աղոթք լինի, որ ուղղված է հոգեւոր երկնքին. «Հայտնվի՛ր, թո՛ւյլ տուր տեսնեմ Քեզ, բացվի՛ր, տո՛ւր ինձ այդ շնորհն ու ուրախությունը»։ Եւ այս աղոթքը, հնարավոր է, երբեք էլ բառերով չի արտասանվում, այլ* անմոռուն ապրում է սրտում որպես նվիրական, թեթեւ թրթիռ, *սպասումի, հույսի, հավերժ հետհայացի թրթիռ կամ, ուժեղ կամքի տեր մարդկանց պարագայում, որպես համառ եւ անհագ փնտռտուքի վստահություն ու պահանջ։*

*Այս սիրո բանաձեւը մոտավորապես հետեւյալն է. «Այս առարկան լավն է (հնարավոր է նույնիսկ կատարյալ է), այն* իրապես *լավն է, ոչ միայն ինձ համար է լավը, այլեւ բոլորի, այն իրականում (օբյեկտիվորեն) է լավը, այն լավը կամ կատարյալ կմնար նաեւ այն ժամանակ, եթե ես այն չտեսնեի կամ չիմանայի կամ կճանաչեի նրա որակը, ես նրա մեջ զգում եմ Աստվածային Սկզբի շունչն ու ներկայությունը եւ այդ պատճառով ես չեմ կարող չձգտել դեպի այն, նրանն է իմ սերը, իմ ուրախությունը, իմ ծառայությունը»...*

*Սա կարելի է արտահայտել հետեւյալ ռուսական ժողովրդական առածով.* «Ոչ թե դուրեկանն է լավը, այլ լավն է դուրեկան» («Не по милу хорош, а по хорошу мил»):

*Կարելի է ասել, որ հոգեւոր սերը* կատարելության ճաշակ է *կամ ճշգրիտ հոգեւոր* գործարան (օրգան) է Աստվածային կատարելությունն ընկալելու համար *ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա։ Կարելի էր նաեւ ասել, որ այդ ճաշակը կամ գործարանը (օրգանը) մարդուն հատուկ է լինում Աստծու շնորհով, սակայն, միեւնույն ժամանակ, անհրաժեշտ կլիներ ավելացնել, որ այդպիսի ճաշակի կամ գործարանի (օրգանի)* սաղմերը *շատ մարդկանց (եթե ոչ բոլորին) հատուկ են «ի բնե», իհարկե, տարբեր աստիճանի եւ զորության։ Ոմանք ապրում են այդ* հոգեւոր հակամիտության[3] *մեջ, նրանք հարատեւում են նրա մեջ, սիրում են այն, մեծապես գնահատում այն, ամրացնում, խորացնում, մաքրագործում են այն իրենց ներսում եւ ապա, նրա վրա հիմնվելով,* հավատում եւ գործում։ *Մյուսներն, ընդհակառակն, անտեսում են այն, չեն գնահատում, չգիտեն ինչպես նրա համար ազատել միտքն ու սիրտը, եւ այդ պատճառով թափառում են*

[3] Հակամիտություն (интенция) *բառը միեւնույն ժամանակ արտահայտում է եւ ուղղվածություն, եւ լարվածություն, նշանակում է կենտրոնացված ուղղվածություն, խտացվածություն։*

*սեփական անսկզբունք իրավունքի կամ քմահաճույքի ու հեշտանքի պատահական եւ վայրի արահետներով։*

*Այս ամենից պարզ է դառնում, որ հոգեւոր սերն ընդհանրապես չի բացառում բնազդային կամ զգացական սերը։ Այն չի մերժում, այլ միայն այրում, մաքրագործում, սրբագործում եւ ազնվացնում է Աստծու շողով։ Բնազդը, հոգու հետ հաշտվելով,* նրա *տեսիլքին եւ* նրա *բերկրանքին մասնակցելով, չի դադարում բնազդ լինելուց եւ չի հրաժարվում զգացական, մարմնական սիրուց, այն կորցնում է միայն քմահաճության ձգտումը, սանձարձակ գայթակղության ուժը եւ իրեն հատուկ հոգեւոր իմաստազրկությունը։ Բնազդի ուժը եւ հոգու ուժը զուգակցվում են՝ իրարից չբաժանվելու համար, եւ այդժամ* զգացական սերը դառնում է հոգեւոր մտերմության եւ հոգեւոր սիրո նշմարիտ եւ նշգրիտ նշան։ *«Դուրեկանն» ու «լավը» միավորվում են եւ բնազդը լիովին ազատ է լինում իր անհատական (սուբյեկտիվ) «դուր է գալիս»-ը համարելու հոգեւորապես անսխալ։ «Երկինքն» ասես «երկիր» է իջնում կամ, ավելի ճիշտ, հոգին ներբնակվում է բնազդի մեջ եւ բնազդի գործողությունը դառնում է հոգեւոր իրադարձություն...*

*Հասկանալի է, որ այն ամենն ինչ մենք ասացինք սիրո մասին ընդհանրապես, վերաբերում է նաեւ հոգեւոր սիրուն։*

*Հոգեւոր սիրո մեջ մարդը կենտրոնացնում է իր հոգեւոր ուժերը այն բանի վրա, որ* իրականում *լավ եւ կատարյալ է, եւ դրա արդյունքում այդ սիրո հուրը վերածվում է* սրբազան կրակի։

*Այս* իրական (օբյեկտիվ) կատարյալը *հենց* ինքնին Աստվածայինն է, *որն ասես ճառագել է երկրի, բնության եւ մարդկանց մեջ եւ այժմ նրանցից ճառագում է փնտրող հոգուն ընդառաջ։ Իրերի եւ մարդկանց աշխարհը ողողված է շնորհի հովերով, լուսավորված եւ սրբագործված է Աստծու Հոգու ներկայությամբ։ Հոգով կույրը չի տեսնում այդ լույսը, հոգով մեռածը չի զգում այդ հովերը, իսկ հոգեւորապես լայնարձակ եւ նրբազգաց հոգին ականջ է դնում դրանց, ասես հրաշալի եւ լուսավոր մի երաժշտության։ Նա ունկնդրում է դրանց եՀ դաշտային ծաղիկների ուրախության, եՀ առաջնաէջ եւ ամենասփյուռ ձյան ծածկի շնորհի, եՀ հեռավոր սառցե լեռների լռության, «եՀ կատաղած օվկիանոսում՝ ահեղ ալիքների ու մոլեգին խավարի մեջ» (Պուշկին)։ Նա ունկնդրում է դրանց եՀ մայրական սրտի խանդաղատանքի, եՀ զղջացող մեղավորի խոնարհության, եՀ վեհանձն հայրենասերի սխրանքի, եՀ «արվեստների եւ ներշնչման արարումի» (Պուշկին) մեջ, եՀ գիտնական ճգնավորի ճանաչողական հրճվանքում։*

*Հոգեւոր տեսողություն ունեցող հոգու համար «արարված այս ողջ բնությունը» մի «անսահման մեծ գիրք է», որտեղ մարդը, «երբ ցանկանում է», կարող է կարդալ «Աստծու խոսքերը» (Անտոն Մեծ[4]), քանզի չկա աշխարհում «այնպիսի տեղ կամ նյութ, որտեղ Աստված չլինի» (Անտոն Մեծ[5]), եւ Աստծով է ստեղծվել «այն ամենը, ինչ որ երկնքում է եւ ինչ որ՝ երկրի վրա, ինչ որ երեւում է եւ ինչ որ չի երեւում» (Պողոս առաքյալ[6])։*

*Երկու մարդ միեւնույն ժամանակ նայում են իրերի եւ մարդկանց աշխարհին։ Եւ ահա, մեկը տեսնում է Աստծուն, իսկ մյուսը՝ ոչ։ Ինչո՞ւ։ Որովհետեւ Նրան տեսնել կարող է միայն նա, ով իր ներսում վառել է հոգեւոր սիրո եւ հոգեւոր տեսողության ճրագը։*

Ամեն աչքի համար չէ բնությունը
Արթնացնում իր խորհրդավոր հովանին.
Մենք այսպես թե այնպես կարդում ենք այն,
Սակայն ո՞վ է ընթերցելիս ըմբռնում։
Միմիայն նա, ով լինելով պատանի
Կրոտ հուրմն է եղել արվեստի
Ով չի խնայել կյանքը հանուն զգացմունքի,
Ձեռք է բերել պսակը տանջանքի,
Հոգով վեր է կանգնել սնոտիից ավելի,
Եւ անհագությամբ յուր լսելիքի,
Որպես մի ձայն մարգարեի,
Ուրացել է թրթիռն իր իսկ սրտի[7]։

*Հոգեւորն ու սրբազանը տեսնելու համար պետք է աշխարհին դիմել հոգով եւ սրբությամբ, լույսը եւ խորհուրդը տեսնելու համար պետք է հոգում խորհրդի եւ սիրո գործարանն (օրգանն) ունենալ։ Եւ այդ պատճառով էլ պետք է սեփական հոգում հաստատել եւ զարգացնել այդ գործարանը (օրգանը), պետք է* հոգու համար աչք *եւ* սիրո համար ներքին կրակարան *ձեռք բերել։ Եւ միայն այդժամ մեզ համար կբացահայտվի, որ, իրոք, «երկրի վրա չկա որեւէ չնչին ակնթարթ»[8], եւ հասկանալի կդառնա, թե*

---

[4] *Տե՛ս* Добротолюбие, т. *1, էջ 588, մեջբերված է ըստ Եւագրիոսի։*
[5] *Տե՛ս անդ էջ 75, հմմտ. էջ 91 եւ այլն։*
[6] *Կող. 1։16*
[7] Дмитрий Веневитинов, «Поэт и друг».
[8] Евгений Баратынский, «На посев леса».

*ինչու կան շատ մարդիկ, որոնք նայում են եւ չեն տեսնում, կամ, ինչպես Հերակլիտեսն է ասում. «ներկա լինելով՝ բացակա են»։*

Հոգիների մեջ նրանց շող չի կաթել,
Կրծքի տակ նրանց գարուն չի ծաղկել,
Նրանց ներկայությամբ անտառները չեն խոսել
Եւ գիշերն աստղերի մեջ համր է մնացել։
Եւ գիշերվա մեջ ընկերային զրույցում,
Անտառներն ու գետերը ալեկոծելով,
Վերերկրային լեզուներով
Ամպրոպը նրանց հետ խորհուրդ չի արել[9]։

*Այս ամենը նշանակում է, որ* սերը մարդու հոգու աչքերը բացում է կատարյալի հանդեպ *եւ առաջնային ու կարեւորագույն* աղբյուրն է Աստծու հանդեպ հավատքի։ *Ով ինչ սիրում է՝ այն էլ փափագում ու փնտրում է։ Եւ քանի որ փնտրելին Աստված է՝* իսկական իրական կատարելությունը, *ուստի նա հենց Նրան էլ գտնում է։ Ահա թե ինչ է նշանակում ավետիսն այս. «մոտ եմ, դռան առաջ» (հմմտ. Հայտ. Ա. 20)։*

*Այս դեպքում Աստված դառնում է մարդկային կյանքի կենդանի կենտրոնը, նրա գանձը՝ արդեն գտնված, սակայն այդուհանդերձ անդադար փնտրվող, եւ մարդն ինքը դառնում է* հարուստ *որպես այդ գանձն ունեցող եւ միեւնույն ժամանակ* աղքատ՝ *որպես հավերժ Նրան ծարավի, որպես հավերժ ուխտավոր։ Այստեղ նա հասանելիություն է գտնում հոգեւոր իրականությանը, որը բացվում է նրան հոգեւոր փորձառության միջոցով եւ ենթակա չէ ոչ մի արտաքին «հարաբերականության» կամ պայմանականության։ Այստեղ նա ուրախության, սրբազան ցնծության, հոգեւոր երանության անսպառ աղբյուր է գտնում, եւ ոչ մի արտաքին բան չի կարող զրկել նրան այդ աղբյուրից, քանզի այն հենց նրա մեջ է։ Այստեղից է իր սկիզբն ու կարգն առնում նրա կենսական* կամքը, *այստեղ է նա սովորում* ուժգին ցանկալ ճշմարիտը, *այստեղ է նա ճանաչում իր պարտքն ու պարտականությունները, այստեղ է նա անձնուրաց, անձնազոհ ծառայություն ուսանում։ Նրա մեջ ձեւավորվում է* իր անձնական բնավորության *վերջին եւ խորին* հիմքը, *դրվում է այն վեմը, որի վրա նա հաստատելու է իր հոգու խորանը։ Եւ քանի որ նա, ինչպես բոլոր ժամանակների սիրով առաջնորդվող*

[9] Федор Тютчев, «Не то, что мните вы, природа».

*ամեն մարդ, անկեղծ եւ կենտրոնացած կերպով* ապրում է *սիրո առարկայով՝ ընտելանալով նրան, [մտնելով նրա մեջ], կամ, եկեղեցական արտահայտությամբ՝ «զգեստավորվելով նրանով», ուստի նրա ներքին էությունը սկսում է ստանալ կատարելության կենդանի երանգ, Աստծուց ելնող կենդանի սրբություն։ Կենդանի միություն է առաջանում, որի մասին արդեն խոսել ենք[10]։ Մարդը չի ընդդիմանում Աստծուն որպես օտար, սարսափելի «այլ էության», նա խորհրդավոր կերպով ընդունում է Նրան իր մեջ, նա կրում է Նրան սրտի խորքում այնպես, որ մարդը սրբագործվում է իր մեջ ներկա Աստվածությամբ, իսկ Աստված կարծես ճառագում է նրա սրտի ու գործերի միջից։ Պողոս Առաքյալի խոսքի համաձայն. «իսկ Տիրոջ հետ միավորվողը, մե՛կ հոգի է Նրա հետ» (հմմտ. Ա. Կորնթ. Զ. 17)։*

*Հենց սա նկատի ուներ Մակար Մեծը, երբ խոսում էր խորհրդավոր «սերտաճման» կամ «ներշաղախման» մասին։ Հենց սա նկատի ուներ Հեգելը, երբ պնդում էր, որ անկեղծ եւ կրակոտ աղոթքն առ Աստված ինքնին լավագույն ապացույցն է Աստծու գոյության, քանի որ այն Աստծու Հոգու կենդանի ներգործումն է աղոթող մարդու սրտի մեջ... Ով սրտի խորքերից աղաղակում է առ Աստված, նրա մեջ արդեն ներքնապես գործում է ինքն Աստված, եւ դա իրական, փորձառական եւ ակնառու ապացույց է Նրա գոյության, որից հետո մեկ այլ մտավոր դատողական ապացույց պահանջելն անիմաստ է։ Սակայն այս ապացույցը կարելի է ստանալ միայն անձնական եւ կենդանի հոգեւոր փորձառության միջոցով, իսկ այդ փորձառությունից զուրկ մարդու համար այն անհասանելի է։ Նա, ով ունեցել է այս փորձառությունն ու այս ապացույցը, նա արդեն երբեք ինքն իրեն լքված կամ մերժված չի զգա, քանի որ գիտի, որտեղ եւ ինչպես կրկին կարող է գտնել իրեն հայտնված հասանելիությունը, եւ նա կկարողանա գտնել այն, նույնիսկ, ծովի փոթորկի մեջ բացարձակապես միայնակ կորչելիս, կամ սառցե անապատում, կամ ամենավերջին ստորգետնյա բանտում, նա փորձանքի մեջ էլ կգտնի այդ ճանապարհը եւ մահվան մեջ էլ հոգեւոր հենարան կստանա։*

## 2. Սերը որպես ճանապարհ

*Այսպիսով՝ կատարյալի հանդեպ սերը հոգեւոր հավատի աղբյուր է։ Հենց այս ճանապարհին է մարդը դառնում հավատացյալ այդ բառի իսկական եւ անաղարտ իմաստով։*

---

[10] *Տե՛ս առաջին գլխի երկրորդ բաժինը։*

*Հնարավոր չէ սկսել հավատալ տրամաբանության, վերացական մտավոր ապացույցների կամ փաստարկների հիման վրա։ Տրամաբանական ապացույցները կարող են միայն* վերացնել մտավոր կասկածները, *եւ այդ էլ միայն այն դեպքում, եթե բոլոր կասկածները բխում են մտավոր աղբյուրից եւ ունեն բանական եւ առարկայական հիմնավորումներ*[11]*։ Հավատքն ապացույցներով չի տրվում, քանի որ հավատքի աղբյուրը բանականության մեջ չէ, այլ* սրտի առարկայական՝ իրական այրման։ *Այս է ուղղափառության հիմնական տարբերությունը բողոքականությունից։*

*Ճիշտ նույն կերպ էլ հնարավոր չէ հավատալ սեփական կամ ուրիշի կամային որոշման (հրամանի կամ պարտադրվող տառապանքի)՝ հիման վրա։ Ճիշտ է, հավատացող (հենց հավատացող, ոչ թե՝ հավատացյալ) կամ ինքնահամոզման միջոցով հավատալ սկսելու ունակ (հատկապես, եթե նրան չի հետաքրքրում ինչին, ըստ էության, «պետք է» հավատալ) մարդուն կամքը կարող է օգնել՝* կասկածները *կամ այլ ներքին դիմադրությունները* ճնշելու, *սակայն այդ ճանապարհը չի տանում հավատքի։ Ինչքան էլ մարդը պնդի ինքն իրեն, որ «պետք է» հավատալ, նրա սիրտը դրանից չի բորբոքվի հրով եւ հոգեւոր տեսողություն չի առաջանա։ Մյուս կողմից կամքը կարող է փշրել հոգու ամբողջականությունը եւ դրանով մարդու համար հավատքը հավերժ անհասանելի դարձնել, կամքը կարող է ընտելացնել մարդուն երեսպաշտ դրսեւորումների՝ դրանով իսկ այլանդակելով նրա հոգեւորությունը։ Կասկածից վեր է, նաեւ, որ ոչ մի կամային ճիգ չի կարող բացել հոգեւորապես կույր աչքերը եւ չի կարող կյանքի կոչել սիրո խորին հուրը։ Հավատքը չի տրվում կամային ճնշմանը, քանի որ հավատքի աղբյուրը ոչ թե կամային որոշման («հավատալու եմ») մեջ է, այլ՝* հայեցող սիրո ուժի։ *Այս է ուղղափառության եւ կաթոլիկության հիմնական տարբերությունը։*

Մարդը կարող է հավատալ միայն ազատորեն եւ ամբողջապես տեսնելու, հոգեւորապես սրտով տեսնելու կամ, այլ կերպ ասած, ազատ եւ անկեղծ սիրո այրման մեջ Աստծուն տեսնելու դեպքում։ *Սակայն յուրաքանչյուրն ինքը եւ ինքն իր տեղը պետք է վերապրի դա։ Ճիշտ է, մեկի այրվող հավատքը, իր խոսքերի եւ գործերի միջոցով հորդելով, կարող է այլ սրտերում էլ կրակ առաջացնել, սակայն այդ ուրիշ սրտերում այդ հուրը պետք է*

---

[11] *Ուզում եմ ասել, որ լինում են զուտ անձնական եւ այն էլ անգիտակցական աղբյուրից բխող կասկածներ, որոնք հնարավոր չէ վերացնել եւ հագեցնել ոչ մի ապացույցով, որոնք մշտապես առաջանում են կրկին եւ վայելում իրենք իրենց, ճիշտ ինչպես փոքրիկ երեխաների անհեթեթ «ինչո՞ւ»-ները։*

*առաջանա իրապես որպես կենդանի եւ ինքնուրույն կրակ, եւ ոչ թե միայն «նմանակման» կամ ներշնչող «վարակման» տեսքով։ Միայն այդ դեպքում հոգեւոր սերը հոգու ներսում հոգեւոր տեսողություն կառաջացնի (ինչպես լինում է ոմանց հետ), կամ էլ (ինչպես ուրիշների հետ է պատահում) հոգեւոր հանկարծատեսությունը հավատքի կրակ կյանքի կկոչի։ Այդ դեպքում հավատքը կարող է վերափոխվել հոգու կենտրոնի եւ կյանքի իրական ճանապարհի։*

*Հավատքը դառնում է* գլխավորը կյանքում, *ոչ թե եկեղեցական աստվածպաշտության իմաստով, քանի որ բացարձակապես բոլոր մարդիկ կոչված չեն հոգեւոր աստիճան ունենալու, այլ տրամադրության, որոշումների, խոսքերի եւ գործերի գլխավոր աղբյուրը։ Հավատքը կոգեշնչի եւ կուղղորդի կամքին, նոր հորիզոններ կբացահայտի մտքի եւ երեւակայության համար, կշնորհազարդի զգայական կյանքը եւ կդաստիարակի մարդու զգացական կյանքը՝ լուսավորելով ու խանդավառելով այն։ Այն ասես կկանգնի հոգեւոր շրջանի կամ կյանքի գնդի կենտրոնում եւ ասես իբրեւ կենդանի շառավիղներ կսկսի ողջ շրջագծով մեկ տարածել իր ճառագայթները ամենաթափանց լույսի տեսքով, որ բացահայտում է ամեն ինչի հոգեւոր իմաստն ու չերեւացող յուրահատուկ կրոնական կարեւորությունը։ Եւ դրա շնորհիվ անաստվածության աղբյուրն ու հոգեւորության գլխավոր թշնամին՝* գոեհկությունը, *աստիճանաբար, բայց վերջնականորեն դուրս կմղվի կյանքից։*

*Հավատացյալ մարդու հոգեւոր տեսողությունը բացված է, որը տարբերում է* բարին *չարից,* կատարյալը՝ *անկատարից։ Եւ այդ պատճառով էլ նա տեսնում է Աստծուն, քանզի Աստված է* բարին եւ կատարելությունը:

*Հավատացյալ մարդու՝ խորհրդավոր եւ աչքերից ծածկված «հոգեւոր զոհասեղանին» (Գրիգոր Սինայեցի) կրակ է վառվում՝ իր* հոգեւոր սերն է, *որը առաջնորդում եւ ստիպում է նրան կատարյալին սոսնձվել։ Եւ այդ պատճառով էլ նա ոչ միայն տեսնում է Աստծուն, այլեւ սիրում է նրան՝ համաձայն Ավետարանական խոսքի պատգամի՝ «ամբողջ սրտով», «ամբողջ հոգով», «ամբողջ մտքով» եւ «ամբողջ զորությամբ» (այսինքն՝ կամքով)[12]։*

*Էլ ինչ ապացույցներ կամ հերքումներ կարող են համոզել նրան, թե իբր նա «չի տեսնում» կամ «չի սիրում Աստծուն», եթե նա Ե՛ւ տեսնում, Ե՛ւ սիրում է Նրան, Նրա իսկական կատարելության իսկական իրականության եւ դեպի մարդկանց եւ իրերի աշխարհ Նրա բոլոր ծածուկ,*

[12] *Մատթ. ԺԲ. 37–40, Մարկ. ԺԲ. 29–31, Ղուկ. Ժ. 26–28։*

*սակայն շնորհաբաշխ ճառագայթումների մեջ։ Հոգով շոշափելով Նրա ներգործությունն իմ մեջ, իմ կենդանի եւ իսկական հոգեւոր փորձառության մեջ ընկալելով եւ մտահայելով Նրան, ինչպե՞ս կարող եմ ես չհավատալ կամ դադարել հավատալ Նրան։ Հավաստիքի աղբյուրն իմ մեջ է, այդ աղբյուրն ունի* կենդանի փորձառության *բնույթ, որն ավելի խորը եւ նախնական է, քան ցանկացած բանական ապացույց, քան ցանկացած վերացական հերքում...*

*Բնական է, որ սեփական ներքին փորձառության մեջ այս աստիճանին հասած եւ Աստծուն հավատացած մարդը սուր կարիք է զգալու Աստծու մասին իմանալու ավելին, քան տալիս է այդ հավաստի եւ կրակոտ, սակայն, գուցե ոչ բավարար որոշակի հոգեւոր փորձառությունը։ Նա անպատճառ հարցնելու է ինքն իրեն. ինչ է ի վերջո հայտնվում ինձ, Հերակլիտեսի կրակի պես անդեմ մի աստվածությո՞ւն, Սպինոզայի սուբստանցիա՞ն, թե՞ անձնավոր Աստված, ինչպես սովորեցնում է նրա մասին քրիստոնեությունը։ Եւ եթե դա անձնավոր Աստված է, ապա ինչպե՞ս պատկերացնել նրան։ Ինչպե՞ս համադրել Աստծու անձնավորությունը Իր ամենագոյության[13] հետ։ Հնարավո՞ր է տեսնել եւ ըմբռնել Աստծու վերաբերմունքն աշխարհի եւ մարդկային ցեղի հանդեպ եւ մարդկային ցեղի վերաբերմունքը Աստծու հանդեպ։ Եւ ինչպե՞ս կենդանի փորձառությամբ եւ հոգեւոր տեսողությամբ համոզվել, որ քրիստոնեական Եկեղեցում[14] կրոնական ճշմարտություն կա։*

*Ինքնին ենթադրելի է, որ այս բոլոր հարցերին սպառիչ պատասխան կարելի է տալ միայն մի ամբողջական* դոգմատիկ աստվածաբանության *տեսքով, սակայն այն էլ բավարար չէր լինի, հարկավոր կլիներ անդրադառնալ արեւելյան ուղղափառ ճգնակեցական հոգեւոր ճանապարհներին եւ փորձել դրանց մտահայեցողական գործնական կյանքը վերարտադրել սեփական կենդանի փորձառության մեջ (իհարկե, ուժերի ներածին չափով)։ Այս ամենը մեր խնդիրը չէ։ Այստեղ մենք պետք է սահմանափակվենք հետեւյալ ուղենշային ցուցումներով։*

*Կենդանի կամ երկրի վրա ապրող մարդկանցից ոչ մեկը չի կարող իր հավատքը կատարյալ եւ ավարտուն համարել՝ ոչ խորության, ոչ էլ բովանդակության տեսակետից։ Ընդհակառակը, յուրաքանչյուր ոք մինչեւ վերջ մնում է* իր հավատի կառուցողն ու Աստծու աշակերտը։ *Եւ որքան ավելի անկեղծ եւ*

---

[13] *Ամեն տեղ ներկա լինելու* – ծան. թրգմ.։

[14] *Բնագր.՝ «Ուղղափառ Եկեղեցում»* – ծան. թրգմ.։

*համեստ է նա իր աշակերտության մեջ, այնքան ավելի արդյունավետ կլինի նրա կառուցումը, այնքան ավելին նա կհասնի թե՛ իր հավատքի խորացման, թե՛ դրա բովանդակության բացահայտման եւ հարստացման գործում։*

*Այս հարցում ոչ մի մարդ իր անձնական, միայնակ ուժերին ապավինելու հիմք չունի, քանի որ կարող է վստահ լինել, որ նույնիսկ կենտրոնացված եւ լարված լինելու դեպքում իր ողջ կյանքը չի բավականացնի Աստծու խորհուրդները փորձելու համար. «Նրա չափը երկար է երկրից»[15]։ Այդ պատճառով յուրաքանչյուր մարդ պետք է զննի իր կրոնական գործողության կազմությունը (արդյո՞ք միտքն է գերակշռում անտեղ, թե՞ կամքը, կամ երեւակայությունը, կամ սրտի այրումն ու սիրո հայեցողությունը...) եւ ականջ դնի իր հոգեւոր փորձառության բերած բովանդակությանը։ Եւ, զննելով եւ ունկնդրելով, պետք է ընտրի դրանց առավել հարազատ կրոն եւ եկեղեցի, դառնա այդ եկեղեցու եւ կրոնի անդամը որպես* արդեն *հավատացող, սակայն դեռեւս* ոչ բավարար եւ ոչ կատարյալ *հավատացյալ աշակերտ։ Կարելի է ենթադրել, որ իր կրոնական գործողության կառույցն առավել մոտ է լինելու իր հայրերի հավատքին, սակայն կյանքում նաեւ այլ կերպ է լինում։ Ընդ որում հարկավոր է արձանագրել, որ որքան ավելի շատ նրա հավատքն ունենա* սրտի այրման եւ սիրո հայեցողության փորձառությունը, *այնքան ավելի մոտ կլինի Ուղղափառ Քրիստոնեությանը։*

*Հավատքի հարցերում աշակերտ լինելը չի նշանակում հեղինակությունների ցուցումներով ինչ-որ բանաձեւեր անգիր անել, այլ՝ հոգատար եւ պատասխանատու կերպով խորացնել, մաքրել եւ ընդարձակել սեփական հոգեւոր զգայարանն ու նրա բովանդակությունը, նշանակում է փարվել տվյալ Եկեղեցու հոգեւոր-կրոնական փորձառությանն ասես մի ինչ-որ «անսպառելի բաժակի» (Շմելյով), եւ անձնապես հասանելի եւ առողջարար չափով ըմպել դրանում առկա իմաստությունն ու զգոնությունը։ Այսպիսի աշակերտությունը ոչ միայն ամոթալի եւ նվաստացուցիչ չէ, այլ, ընդհակառակը, իր խոնարհության մեջ այն իմաստուն է եւ բուժականության մեջ՝ վեհացնող։*

*Ինչ դավանանքի էլ մարդը փարվի, ինչ կրոնի էլ հպվի, նա հարաբերվելու է Աստծու հետ։ Այդ հարաբերությունն* աղոթքն *է։ Հենց աղոթական փորձառությունն էլ կպատասխանի նրա ձեւակերպած բոլոր հարցերին։*

*Այսպես, եթե նրա հավատքը կառուցված է* հոգեւոր սիրո *վրա, ապա այն կբացահայտի իրեն, որ* Աստված հոգի է եւ սեր, *որ ամենուր եւ միշտ,*

---

[15] *Տե՛ս* Н. С. Лесков, Захудалый род, *էջ 164։*

*երբ ինքն այլ իրերի եւ մարդկանց մեջ հոգու եւ սիրո հպվի՝ կարծես Աստծու զգեստին է հպվելու, եւ որ ամեն անգամ, երբ նա իր ներսում հոգու շարժում եւ սիրո թրթիռ է զգում՝ կենդանի Աստծու հետ է հաղորդակցվում։ Նա կհամոզվի, որ իր ներսի գլխավորն ու սրբազանը, իր անձի իսկական էությունը, ոչ միայն նման է Աստծու բնությանը, այլ որ* ինքը *իսկ այդ կրակի կայծն է, այդ աղբյուրի ջրի կաթիլը, այդ Հոգուն հարազատ կենդանի եւ անձնավոր էակ (անհատացում[16])։ Այդժամ նա կասի. «ես կյանք եմ Քո Կյանքից եւ հոգի՝ քո հոգուց, եւ այն, ինչ հոգով ցանկանում եմ, Քո Կամքն է, եւ Քո Գործին եմ կամենում ծառայել այսուհետ եւ մինչեւ վերջ, եւ այնպես, ինչպես ես եմ սիրում Քեզ, նույնպես, սակայն անսահմանորեն ավելի կատարյալ ձեւով կամենում եմ սիրված լինել Քո կողմից»։ Եւ այս մի աղոթքը ցույց կտա նրան, որ Աստված* անձնավոր *եւ կենդանի Աստված է։ Քանզի կանչել եւ լսված լինել, աղոթել եւ զգալ, որ աղոթքը հասել եւ ընդունվել է, բացել սիրտը եւ ներված ու բժշկված զգալ նշանակում է* անձնական *շփման մեջ մտնել* անձնավոր *Աստծու հետ։ Եւ, հիշելով երկրային բոլոր չափումների եւ բառերի պայմանականության ու անկատարության մասին, նա առաջին անգամ Աստծուն կդիմի որպես «Հոր», իսկ իրեն կզգա որպես այդ Հոր «որդի», որ գտնվում է Նրա անբացատրելի եւ շնորհաբաշխ սիրո մեջ։*

*Միայն* հոգով *կարելի է ճանաչել Հոգին որպես ամեն ինչի եւ բոլոր մարդկանց բարձրագույն բնություն եւ էություն։ Միայն կենդանի, կրակոտ* սիրո *միջոցով է հնարավոր ճանաչել, որ Աստված Սեր է։ Միայն նա, որ հոգու եւ սիրո մեջ իրեն «որդի» է զգում, կարող է կանչել Հորը։*

*Եւ նա, ով մեկ անգամ կունենա այս փորձառությունն ու կհասկանա սա եւ դրանից հետո կկարդա եւ կզգա Ավետարանը, ի դեմս Քրիստոսի կտեսնի Աստծու իսկական, միածին Որդուն եւ կընդունի Նրան հոգով, սիրով եւ հավատով։*

## 3. Սերը եւ հավատը

*Այս նկարագրության մեջ ոչ մի վերացական հորինվածք կամ կամայական ձեւակերպում չկա։ Եւ այստեղ շարադրվածի մեջ անպատասխանատու քմահաճ հերյուրանք կամ խավար սնահավատություն չկա։ Այստեղ բանականության լույսը չի մթագնում, միայն այստեղ է վերցված տափակ գիտակցության աղջամուղջը եւ ազատություն է տրված սրտի*

[16] Индивидуация.

*փորձառությանը։ Այստեղ ամեն բան հենվում է կենդանի, իսկական, հոգեւոր փորձառության վրա։ Եւ լավ, համեստ եւ խելամիտ կլիներ, որ նա, ով այս հոգեւոր փորձառությունը չի ունեցել եւ չի էլ ցանկանում ձեռք բերել եւ ապրել այն, ձեռնպահ մնար դատողություններ անելուց եւ հրաժարվեր դատարկ, հեգնական քննադատությունից։ Շատ լավ կլիներ, որ Հիսուս Քրիստոսին հոգով եւ սիրով չընդունած մարդը չափազանց մեծ զգուշավորությամբ դատեր Քրիստոսի եւ քրիստոնեության մասին՝ իրեն քրիստոնեության թշնամիների շարքին ամենեւին չդասելով։ Հաճախ, շատ հաճախ, անաստվածը այդպիսին է միայն այն պատճառով, որ իր ներսում հոգեւոր հայեցողություն* դեռ *չի ձեւավորել եւ այն սխալ կարծիքին է, որ այդպիսի հոգեւոր ունակություն գոյություն չունի եւ չի կարող ունենալ։ Եթե ես չգիտեմ, որն է Երուսաղեմի ճանապարհը, կարո՞ղ եմ ես արդյոք իմ անգիտությունից եզրակացնել, որ ոչ Երուսաղեմը, ոչ էլ այնտեղ տանող ճանապարհը բնավ գոյություն չունեն։ Կամ եթե այդ ճանապարհն իմացողը դժվարանում է նկարագրել այն, ապա կարելի՞ է արդյոք հետեւեցնել, որ նա ամենեւին էլ այդ ճանապարհը չգիտի կամ որ նա պարզապես խաբեբա է։ Հոգեւոր փորձառությամբ եւ հոգեւոր սիրով ապրող բոլոր մարդիկ չեն կարող սովորեցնել ուրիշներին այդ փորձառությունը եւ այդ սերը, կամ նկարագրել դրանք, հիմնավորել դրանք եւ բացահայտել դրանց էությունը, դրա համար հատուկ ունակություններ եւ շնորհներ են հարկավոր։ Սակայն նա, ով ստանձնում է այդ խնդիրը, պետք է իրապես հոգեւոր փորձառության վարպետ լինի, նա պետք է կարողանա ապրել, ընկալել եւ մտահայել հոգեւոր սիրո մեջ, քանզի եթե նա այս ամենը չի կարող, ապա ոչ ուսուցիչ կարող է լինել, ոչ էլ հոգեւոր դաստիարակ։*

*Այսպիսով, հոգեւոր փորձառությունը, հավատքի եւ կրոնի այդ կենդանի աղբյուրը ոչ հորինվածք է, ոչ սնահավատություն։ Այն իսկական իրականություն է, եւ յուրաքանչյուրը կարող է եւ կոչված է ապրելու այն, հավաստիանալու դրանում եւ յուրացնելու այն (իհարկե, յուրաքանչյուրն իր ձեւով եւ իր սահմաններում)։ Եւ այդժամ նա կտեսնի, որ այդ աղբյուրից իրապես բարեբեր հոսանք է հորդում դեպի մարդկային կյանք եւ ողջ մարդկային մշակույթ։*

*Հոգեւոր փորձառության կառուցման եւ իրականացման գործում մարդիկ եւ ժողովուրդները նման չեն իրար*[17]*։ Այսպես, օրինակ, պատմությանը հայտնի են ամբողջական ազգեր, որոնք առաջին հերթին եւ ամենից շատ*

[17] *Այս մասին տե՛ս յոթներորդ գլխում։*

*«կատարելությունը» զգացական հայեցողության մեջ էին փնտրում (հույները)։ Դրա հետեւանքով նրանք պատկերավոր գեղեցկության կրոն են ստեղծել եւ նրանց աստվածները, չնայած իրենց գեղեցկության եւ մեծության ավարտուն լինելուն, մնացել են գեղակերտ, մարդակերպ անհատականություններ, ուժի կրողներ, հոգեւորապես եւ բարոյապես անկատար էակներ։ Սրան զուգահեռ պատմությունը մատնացույց է անում նաեւ այնպիսի ազգերի, որոնք կատարելությունը «փնտրում» էին վերին հեղինակության կողմից իրենց հանձնարարված օրենքների եւ ծեսերի պահպանման մեջ (հրեաներ), որի հետեւանքով նրանք ստեղծեցին խստագույն ծիսականություն ունեցող մի կրոն եւ նույնիսկ նրանց հետագա մարգարեների բարոյական խորունկ պայծառացումները չկարողացան ո՛չ փոփոխել, ո՛չ վերացնել կրոնի՝ նրանց մշակած ազգային ընկալումը...*

*Է՛լ առավել բազմազան են առանձին մարդկանց հոգեւոր ճանապարհները։ Մարդիկ կան, որոնք Աստծու զգեստի քղանցքը բռնում են մշակույթի մեջ եւ մշակույթի միջոցով, նրանք հասկանում եւ իրականացնում են մշակույթը որպես աշխարհի եւ մարդու աստվածային էությունը տեսնելու եւ պատկերելու հատուկ եղանակ։ Նրանց զուգահեռ կան այլ մարդիկ, որոնց ազնվական մշակույթի ներշնչանքը չափազանց քիչ բան է տալիս, սակայն փոխարենը նրանց սիրտը մերձավորի հանդեպ կենդանի սիրո մեջ այնպես է ծաղկում, որ նրանք հոգեւոր փորձառություն եւ Աստծու հայեցողություն են ունենում հենց այդ ճանապարհին։ Մարդիկ էլ կան, որոնց Աստծու լույսը տրվում է արդարության եւ իրավունքի հայեցողության, իմաստուն, անկաշառ, գեղարվեստականորեն նրբազգաց արդարադատության մեջ։ Այլք Աստծու միեւնույն լույսը գտնում են չարչարանքները արիաբար եւ համբերատարությամբ կրելու մեջ[18], ուրիշները՝ Աստծու իմաստությունը հայում են բնության եւ նրա խորհրդավոր-սքանչելի կյանքում[19], այլք Աստծու հետ անմիջական շփման մեջ են մտնում պարզ, միայնակ, անկեղծ աղոթքի զեղումներում... Այս ճանապարհներից ոչ մեկը մերժելի չէ, դրանցից յուրաքանչյուրը կարող է եւ պետք է հասցնի մարդուն հավատքի սրբազան կենտրոն՝ առ Աստված՝ Հայրն ամենքի։ Ավետարանն ընդգրկում է բոլոր այս եւ բոլոր ուրիշ ճանապարհները, երբ ասում է. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ*

---

*[18] Հմմտ. Տուրգենեւի «Կենդանի մասունքներ»-ի հետ։*

*[19] Հմմտ., օրինակ, Գյոթեն գրում է. «Մի՛թե դու չես տեսնում Աստծուն։ Ամեն մի մեղմիկ աղբյուրի մոտ, ամեն ծաղկող ծառի տակ ես գտնում եմ Նրան Իր սիրո ողջ ջերմությամբ»։ Տե՛ս նաեւ հատկապես Ֆեխների անմահ գիրքը «Նաննա կամ բույսերի Կյանքը»։*

սրտով, *քո ամբողջ* հոգով, *քո ամբողջ* մտքով *եւ քո ամբողջ* զորությամբ», *եւ ապա՝ «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես» (Մատթ. ԻԲ. 37, Մարկ. ԺԲ. 30, Ղուկ. Ժ. 27)։*

*Այսպիսով, կասկածի ենթակա չէ, որ հոգեւոր սերը եւ հոգեւոր փորձառությունը բոլոր մարդկանց միեւնույն չափով եւ միեւնույն ձեւով չեն տրվում։ Դրանք (թե՛ սերը, թե՛ փորձառությունը) ինքնին վերին բարի շնորհներ են, եւ ում տրվում են «ինքնաբերաբար», ասես «բնատուր» լինեն, նա դրանում վաստակ չունի։ Հնարավոր է, սակայն, եւ անհրաժեշտ փայփայել այդ շնորհը, աճեցնել այն, նրա առաջ ճանապարհ բացել դեպի հոգու բոլոր ներքին տարածությունները եւ նրան տրամադրել կյանքի առաջնորդությունը։ Եւ նմանապես հնարավոր եւ անհրաժեշտ է այդ հոգեւոր լույսը այլ մարդկանց փոխանցելը, երբեւէ չխորհելով, որ աշխարհում կարող են լինել այնպիսի մարդիկ, որոնք հավերժորեն զրկված են շնորհից, քանզի եթե նույնիսկ աշխարհում այդպիսի մարդիկ լինեին, ապա մեզանից ո՞վ է ճանաչում այդ դժբախտներին։ Իսկ փորձը ցույց է տալիս, որ հոգու կրակը, թափանցելով քարացած մարդու սիրտը, ի զորու է բռնկելու այն եւ ընդ որում շնորհիվ հարյուրավոր չար շերտերից անդին խորհրդավորապես անթեղված Աստծու կայծի։*

*Իսկ եթե կենդանի եւ իսկական հավատքը ծագի հոգեւոր սիրուց եւ հաստատվի հոգեւոր հայեցողությամբ, ապա այն անպայմանորեն կգրավի մարդկային էության ամենաստորին խորությունները եւ այնտեղից կթափանցի մարդու անձնական կյանքի բոլոր ոլորտները։ Հոգեւոր հավատքն ասես մարդու մեջ նոր աչքեր է բացում կամ նրա հոգու մեջ նոր լարեր է կապում եւ ստիպում նրանց հնչել։ Նոր, ավելի ազնվական, նրբին պահանջմունքներ են առաջանում, նա սկսում է տեսնել եւ ճանաչել այն, ինչը ծածկված է մնում անհավատ մարդկանցից՝* մարդկային հոգիների եւ նյութական բնության աշխարհի սրբության տարերքը։ *Ինքնին հասկանալի է, որ հոգեւորապես հավատացյալ մարդը տեսնում է այն ամենը, ինչը դիտելի է նաեւ անհավատի համար, սակայն դրա հետ մեկտեղ եւ դրանից ավելի նա աշխարհում եւ մարդկային պատմության մեջ տեսնում է ինչ-որ* վերին իմաստ, *աշխարհը ղեկավարող ուրիշ, վերին եւ զորեղ օրենքներ՝ Նախախնամության, Հոգու եւ աստվածային նպատակների օրենքներ, ինչպես նաեւ մարդկային ազատության, սխրանքի, արդարության եւ մեղքի օրենքներ... Ընդհանրապես եւ ամբողջությամբ վերցրած՝ յուրահատուկ մի աշխարհ, որ խորհրդավորապես ծածկված է*

*տեսանելի արարչության մեջ։ Աշխարհ, որը հոգեւորապես կենդանի մարդն ասես վարագույրի միջով զննում է ամբողջ կյանքի ընթացքում եւ որին ասես ունկդրում է հեռվից։ Այս ուշադրությունից, այս տեսողությունից եւ լսողությունից էլ առաջացել են այն* բոլոր վեհ բաները, *որ ստեղծել են մարդիկ իրենց պատմության ընթացքում։*

*Ահա թե ինչու ենք պնդում, որ այս շրջանակից դեպի մարդկային կյանք եւ մարդկային ողջ մշակույթ բարեբեր, ստեղծարար շիթեր են հոսում։ Մարդկային բոլոր գործերի ու ստեղծագործությունների մեջ ներթափանցող, դրանք ազնվացնող եւ սրբացնող այդ հոսքի մեջ ամեն ինչ կարծես վերածնվում է, ամեն ինչ սրբազան նշանակություն, խորին իմաստ, ներքին, աներեր հենարան, հոգեւոր ճշտություն եւ հաղթանակող զորություն է ձեռք բերում։ Հենց դրան է կանչում մեր պայծառատես Տյուտչեւը.*

Ե՛կ, լվա՛ տանջված կուրծքդ շիթով եթերային,
Եւ գեթ մեկ վայրկյան հաղորդ դարձիր
Աստվածորեն համաշխարհային կյանքին։

*Սակայն եթե այդ ակնթարթը գա, ապա այն, հավանաբար, կկրկնվի եւ կամրանա։ Իսկ եթե գրավի հոգին, ապա անաստված մշակույթի, աստվածամերժ գիտության, հոգեւորությանը հակառակվող քաղաքականության եւ գթազուրկ, հակաընկերային հասարակության ողջ սնանկությունն ակնհայտ կդառնա եւ կրոնական շնչով համակված ու սրբագործված մշակույթի համեմատ իսկական խավար ու կործանում կթվա։*

*Այսպիսով, մարդը չի կարող ապրել առանց հավատքի։ Սակայն առանց* Աստծու *հանդեպ հավատքի մարդու կյանքը դառնում է անպտուղ, գռեհիկ եւ կործանարար՝ կարծեցյալ կյանք, որ անհաշվելի չարչարանքների եւ համընդհանուր քայքայման է տանում։*

*Իսկ դեպի հավատք եւ Աստված տանող ճանապարհը կոչվում է հոգեւոր սեր։ Եւ առաջինը, որ այն կարող է եւ պետք է տա՝* ազատությունն է։

*Ռուսերենից թարգմանությունը եւ ծանոթագրությունը՝*
ՎԱՀԱՆ ՍՐԿ. ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՒ ԱՐՓԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ